# «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ

0033,ք. Երևան
Մարշալ Բաղրամյան պողոտա 51ա
հեռ. 010272760 էլ. փոստ pol.8@mail.ru

N

«14» ապրիլի 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերով իրականացվող գնումների
ցանկում ներառված կազմակերպությունների տնօրեններին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Պոլիկլինիկա) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Պոլիկլինիկայի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀԵՑՊ-ՇՀԱՊՁԲ-15/13»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեով, մինչև 2015թ.-ի ապրիլի 27-ը, ժամը՝ 12.00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ. Ավագյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Պոլիկլինիկայի շենքում, ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեում, 2015թ.-ի ապրիլի 27-ը, ժամը՝ 12.00-ն:

Գնման առարկա է հանդիսանում սոց. անապահով խմբերում ընդգրկված բնակչության համար՝ 30 % և 50% զեղչով դեղորայքի ձեռքբերումը:

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝

1. Հիվանդների սպասարկումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար պահանջվում է, որ դեղատունը գտնվի Պոլիկլինիկայի սպասարկման տարածքում,

ունենա դեղորայքի պահպանման և պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ:

Դեղորայքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Պոլիկլինիկայի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ pol.8@mail.ru:

Հեռախոս՝ (010) 27 27 60:

Պատվիրատու՝ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան